ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ՀՈԴՎԱԾ 7. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

~~1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունը, այդ թվում՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցության մասին.~~

~~2) հայտարարում է ռազմական դրություն, ինչպես նաև ընդհանուր կամ մասնակի զորահավաք.~~

~~3) որոշումներ է կայացնում զորահավաքային զորակոչ անցկացնելու, ինչպես նաև զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու միջոցով կամ այլ եղանակով զինված ուժերի կիրառման մասին.~~

~~4) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով առաջարկություն է ներկայացնում պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում լուծում է պատերազմ հայտարարելու հարցը.~~

~~5) ծրագրում և ապահովում է ռազմական ուսուցման և ռազմական գիտության զարգացումը.~~

~~6) ղեկավարում և վերահսկում է զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գործընթացը.~~

~~7) գնահատում է զորահավաքային նախապատրաստության վիճակը.~~

~~8) առաջարկություններ է ներկայացնում Հանրապետության նախագահին՝ պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ.~~

~~9) հաստատում է՝~~

~~ա. զինված ուժերի կառուցվածքը և հաստիքային թվաքանակը,~~

~~բ. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունները ու կառուցվածքը,~~

~~գ. պաշտպանական պետական պատվերը և դրա ձևավորման կարգը,~~

~~դ. զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը,~~

~~ե. պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանը, կարգն ու պայմանները,~~

~~զ. կազմակերպությունների հետ զորահավաքային առաջադրանքների (պատվերների) վերաբերյալ պայմանագրեր կնքելու կարգը,~~

~~է. նյութական պահուստում անհրաժեշտ ապրանքների չնվազեցվող պաշարների ստեղծման՝ ձեռքբերման, ֆինանսավորման, ամբարման, կուտակման, պահպանման, թարմացման և ապաամրագրման ծրագրերը,~~

~~ը. պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը,~~

~~թ. զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ֆինանսավորման կարգը,~~

~~ժ. ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը,~~

~~ժա. զորահավաքային նախապատրաստության վերաբերյալ վիճակագրական հաշվետվություն ներկայացնելու կարգը,~~

~~ժբ. տնտեսության, զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային ծրագրերի իրականացման գործընթացում զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների՝ բյուջետային ֆինանսավորման գործիքներով պետական աջակցության իրականացման կարգը.~~

~~ժգ. հանրապետության տնտեսության զորահավաքային պլանը.~~

~~10) կազմակերպում է՝~~

~~ա. զորահավաքային նախապատրաստության ու զորահավաքի գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեությունը, այդ ուղղությամբ ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների անցկացումը,~~

~~բ. պետության, զինված ուժերի և այլ զորքերի պահանջմունքները բավարարող զորահավաքային պլանների մշակումը,~~

~~գ. զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գիտամեթոդական ու տեղեկատվական ապահովումը,~~

~~դ. զորահավաքի անցկացումը, զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի փոխադրումը անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի,~~

~~ե. պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, տնտեսության, բնակչության կենսապահովման, կապի և տեղեկատվության համակարգի գործունեության փոխադրումը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի,~~

~~զ. զինված ուժերի և այլ զորքերի ֆինանսավորման, սպառազինման, բնակավորման, էներգետիկ և այլ ապահովման ոլորտներում, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության գործընթացում պետական և տարածքային կառավարման մարմինների գործունեությունը.~~

~~11) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:~~

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունը, այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցության մասին.

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դեպքերում և կարգով հայտարարում է ռազմական դրություն.

3) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով առաջարկություն է ներկայացնում պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում լուծում է պատերազմ հայտարարելու հարցը.

4) առաջարկություններ է ներկայացնում Հանրապետության նախագահին՝ պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ.

5) հաստատում է՝

ա. պաշտպանական պետական պատվերը և դրա ձևավորման կարգը,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունները.

գ. զինված ուժերի կառուցվածքը և հաստիքային թվաքանակը,

դ. զինվորական հաշվառման, նախագորակոչային պատրաստության կարգերը, զինվորական հաշվառման մասնագիտությունների ցանկը.

ե. պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը.

զ. սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների կուտակման և շահագործման (ծախսի) նորմաների ու շահագործման ժամկետների սահմանման կարգը.

է. սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու և դրանց օտարման կամ ոչնչացման կարգը.

6) զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի բնագավառում՝

ա. ռազմական դրություն հայտարարելու դեպքում, ըստ անհրաժեշտության, որոշում է ընդունում ընդհանուր կամ մասնակի զորահավաք հայտարարելու և զորահավաքային զորակոչ անցկացնելու մասին.

բ. որոշումներ է կայացնում զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու միջոցով կամ այլ եղանակով զինված ուժերի կիրառման մասին.

գ. հաստատում է պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանը, կարգն ու պայմանները,

դ. հաստատում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զորահավաքային պլանը.

ե. հաստատում է զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների ցանկը.

զ. սահմանում է կազմակերպությունների հետ զորահավաքային առաջադրանքների (պատվերների) վերաբերյալ պայմանագրեր կնքելու կարգը,

է. սահմանում է պետությունը պաշտպանության նախապատրաստելու, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գործընթացում պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների մասնակցությամբ մարզումների անցկացման կարգը, այդ ուղղությամբ որոշումներ է ընդունում մարզումներ անցկացնելու մասին.

7) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 8. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝

1) իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում և վերանայում.

~~2) հաստատում է՝~~

~~ա. զինված ուժերի զարգացման պլանը,~~

~~բ. այլ զորքերի զարգացման պլանը,~~

~~գ. զինված ուժերի ծավալման պլանը,~~

~~դ. զինված ուժերի զորահավաքային պլանը,~~

~~ե. զինված ուժերի կիրառման պլանը,~~

~~զ. Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը,~~

~~է. քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը,~~

~~ը. զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.~~

2) հաստատում է՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանը.

բ. ռազմական պլանավորման կանոնակարգը.

դ. զինված ուժերի և այլ զորքերի զորանոցաբնակելի ֆոնդի զարգացման ծրագրերը.

ե. զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.

3) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանը ներառում է՝

1) պաշտպանության պլանի մտահղացումը.

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը.

4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլանը.

5) Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը.

6) Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը:

~~ՀՈԴՎԱԾ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ~~

~~1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝~~

~~1) մասնակցում է՝~~

~~ա. պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի մշակմանն ու վերանայմանը,~~

~~բ. պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանի, կարգի և պայմանների, նյութական պահուստում անհրաժեշտ ապրանքների չնվազեցվող պաշարների ստեղծման, դրանց կուտակման, ապամոնտաժման, թարմացման և փոխարինման ծրագրերի մշակմանը,~~

~~գ. քաղաքացիական պաշտպանության պլանավորմանը և իրականացմանը.~~

~~2) իր լիազորությունների սահմաններում ուսումնասիրում և գնահատում է ռազմաքաղաքական իրադրությունը, ռազմական սպառնալիքների և Հայաստանի Հանրապետության պաշտպանվածության աստիճանը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրերում պաշտպանության ծախսերի, պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների ծախսման կարգի վերաբերյալ.~~

~~4) վարում է զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգ.~~

~~5) իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչը, վարժական հավաքների և զորավարժությունների անցկացումը, զորահավաքային զորակոչը, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրումը.~~

~~6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի տեղեկատվական անվտանգության, ռազմաքաղաքական և պաշտպանական ոլորտներում հետախուզական գործունեության կազմակերպումն ու ապահովումը.~~

~~7) վերահսկում է զինված ուժերի մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային պատրաստականության, զորահավաքային ռեսուրսների հաշվառման ու հավաքագրման գործընթացը.~~

~~8) վերահսկողություն է իրականացնում զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների և ստորաբաժանումների՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի պաշարների կուտակմանն ու բաշխմանն ուղղված գործունեության նկատմամբ.~~

~~9) իր լիազորությունների սահմաններում ղեկավարում է պաշտպանական ոլորտի կազմակերպություններում գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքների իրականացումը.~~

~~10) պատվիրում և ֆինանսավորում է զինված ուժերի համար սպառազինության ու ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ ունեցվածքի, ինչպես նաև նյութական պաշարների արտադրությունն ու գնումները, հսկողություն է իրականացնում զինված ուժերի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի այլ մարմինների կողմից ֆինանսական միջոցների ծախսման և նյութատեխնիկական միջոցների ու ունեցվածքի օգտագործման նկատմամբ.~~

~~11) օրենքով սահմանված կարգով ապահովում է զինված ուժերում օրինականության պահպանումը, հանցագործությունների կանխարգելումը և պետական գույքի պահպանությունը.~~

~~12) մշակում և իրականացնում է զինված ուժերի անձնակազմի ծառայողական առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականությունը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը.~~

~~13) ապահովում է պաշտպանության ոլորտի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման գործընթացը.~~

~~14) իր լիազորությունների սահմաններում կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունը ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական բնագավառում.~~

~~15) կազմակերպում և իրականացնում է ռազմական ուսուցման ու ռազմական գիտության զարգացման գործընթացները, մասնակցում է հանրային տեղեկատվության ոլորտում և կրթության զարգացման պետական ծրագրերում ընդգրկելու համար բնակչության հայրենասիրական դաստիարակության չափորոշիչների մշակմանը.~~

~~16) իրականացնում է պաշտպանության ոլորտում հանրային իրազեկում.~~

~~17) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:~~

~~2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝~~

~~1) պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է պաշտպանության նախարարության և զինված ուժերի ղեկավարումը, ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը.~~

~~2) կազմակերպում և վերահսկում է զինված ուժերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը.~~

~~3) հաստատում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիների թվաքանակը.~~

~~4) հաստատում է զինվորական հաշվառումը վարելու հրահանգը.~~

~~5) ներկայացնում է առաջարկություններ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում նշանակելու և պաշտոններից ազատելու, բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելու վերաբերյալ.~~

~~6) հաստատման է ներկայացնում՝~~

~~ա. զինված ուժերի կառուցվածքը, հաստիքային թվաքանակը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքը,~~

~~բ. զինված ուժերի զարգացման, ծավալման, զորահավաքային, կիրառման, Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանները,~~

~~գ. զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը,~~

~~դ. սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը.~~

~~7) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:~~

~~Հոդված 10. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության լիազորությունները~~

~~1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝~~

~~1) մասնակցում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի մշակմանն ու վերանայմանը.~~

~~2) իր լիազորությունների սահմաններում ուսումնասիրում և գնահատում է ռազմաքաղաքական իրադրությունը, ռազմական սպառնալիքների և Հայաստանի Հանրապետության պաշտպանվածության աստիճանը, իրականացնում է ռազմաքաղաքական և պաշտպանական ոլորտներում հետախուզական գործունեության կազմակերպումն ու ապահովումը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրերում պաշտպանության ծախսերի վերաբերյալ.~~

~~4) վերահսկում է զինված ուժերի և այլ զորքերի մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային պատրաստակամության, զորահավաքային ռեսուրսների հաշվառման ու հավաքագրման, զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության, զինվորական կարգապահության և հայրենասիրական դաստիարակության գործընթացը.~~

~~5) ապահովում է զինված ուժերի զարգացման պլանով սահմանված միջոցառումների իրականացումը.~~

~~6) վարում է զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգ.~~

~~7) իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների, զորահավաքային զորակոչի անցկացումը, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացը.~~

8) իր լիազորությունների սահմաններում վերահսկողություն է իրականացնում զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների և ստորաբաժանումների՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի պաշարների կուտակմանն ու բաշխմանն ուղղված գործունեության նկատմամբ.

9) իրականացնում է զինված ուժերի կարիքների համար սպառազինության ու ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ ունեցվածքի ու նյութական պաշարների գնումները, կառավարում է զինված ուժերի զորանոցաբնակելի ֆոնդը, հսկողություն է իրականացնում զինված ուժերի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի այլ մարմինների կողմից ֆինանսական միջոցների ծախսման և նյութատեխնիկական միջոցների ու ունեցվածքի օգտագործման նկատմամբ.

10) կազմակերպում է զինված ուժերի սպառազինության և ռազմական տեխնիկայի, այլ նյութատեխնիկական միջոցների պահեստային տնտեսության կառավարման և այդ միջոցների կենտրոնացված փոխադրումների գործընթացը.

11) ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի ֆինանսական կառավարման և հսկողության, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման, ակտիվների և պարտավորությունների կառավարման համակարգերի առկայությունը, առաջարկություն է ներկայացնում հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր պետական մարմնին՝ որպես հիմնական միջոց դասակարգված սպառազինության և ռազմական տեխնիկայի, այլ նյութատեխնիկական միջոցների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ.

12) օրենքով սահմանված կարգով ապահովում է զինված ուժերում օրինականության պահպանումը, հանցագործությունների կանխարգելումը և պետական գույքի պահպանությունն.

13) մշակում և իրականացնում է զինված ուժերի անձնակազմի ծառայողական առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականությունը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը.

14) ապահովում է պաշտպանության ոլորտի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման գործընթացը.

15) իր լիազորությունների սահմաններում կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունը ռազմական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական և ռազմատնտեսական բնագավառներում.

16) ապահովում է ռազմական ուսուցման կազմակերպման գործընթացը և աջակցում է ռազմական գիտության զարգացման գործընթացներին, մասնակցում է հանրային տեղեկատվության ոլորտում և կրթության զարգացման պետական ծրագրերում ընդգրկելու համար բնակչության հայրենասիրական դաստիարակության չափորոշիչների մշակմանը, իրականացնում է պաշտպանության ոլորտում հանրային իրազեկում.

17) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝

1) պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է պաշտպանության նախարարության և զինված ուժերի ղեկավարումը, ապահովում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը.

2) կազմակերպում և վերահսկում է զինված ուժերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը.

3) համակարգում է զինված ուժերի կիրառման գործընթացը՝ զինված ուժերի կիրառման պլանի համաձայն.

4) հաստատում է զինված ուժերի մարտական և շարային կանոնադրությունները, զինվորական հաշվառումը վարելու հրահանգը, հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիների թվաքանակը.

5) հաստատում է զինծառայողների կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն իրականացնելու, զենքի, ռազմամթերքի, ռազմական այլ գույքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների ու նյութերի հետ վարվելու և պահպանության, տրանսպորտային միջոցների և մարտական տեխնիկայի վարման ու շահագործման, թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները, զինծառայողների որակավորումների տեսակները և դրանց շնորհման կարգը.

6) սահմանում է սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութատեխնիկական միջոցների կուտակման և շահագործման (ծախսի) նորմաներն ու ժամկետները.

7) սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության շրջանակներում զինծառայողներին սեփականության իրավունքով հատկացվող և սեփականության իրավունքով հատկացման ոչ ենթակա բնակելի տարածությունների ծառայողական ֆոնդի ցանկերը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընդունում է զինծառայողներին սեփականության իրավունքով բնակելի տարածությունների հատկացման մասին հրամաններ.

8) սահմանում է Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատություններում սպայական կազմի պատրաստության կարգը, ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և ներկայացնելու ժամկետները, ռազմաուսումնական հաստատություններից սովորողներին ազատելու (հեռացնելու), վերականգնելու կամ նույն կուրսում թողնելու կարգը.

9) ներկայացնում է առաջարկություններ զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոններում նշանակելու և պաշտոններից ազատելու, բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելու վերաբերյալ.

10) իրեն կից ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ նախարարության կոլեգիա ու հասարակական խորհուրդ, և հաստատում է դրանց աշխատակարգերը.

11) հաստատման է ներկայացնում՝

ա. զինված ուժերի կառուցվածքը և թվաքանակը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանում ներառվող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և զինված ուժերին վերաբերող պլանները և ծրագրերը,

գ. զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը,

դ. զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.

12) իրականացնում է պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կառավարչական իրավահարաբերությունները կարգավորվում են օրենքով: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալների պաշտոնները կարող են հանդիսանալ նաև զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական խմբի պաշտոններ, որոնց թիվը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

ՀՈԴՎԱԾ 11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետական կառավարման համակարգի մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում՝

1) մշակում են զորահավաքային պլաններ և ապահովում են դրանց կատարումը , *Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացնում իրենց համակարգման ոլորտների զորահավաքային առաջադրանքների ծավալները և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների ցանկերը.*

2) ստեղծում են զորահավաքային մարմիններ և կառավարման պահեստային կետեր.

3) պլանավորում են իրենց ոլորտներում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները և ապահովում դրանց իրականացումը.

4) մասնակցում են զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին.

5) իրականացնում են իրենց համակարգերում աշխատող պահեստազորայինների ամրագրումը.

6) ապահովում են իրենց համակարգերի գործունեության փոխադրումը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի.

7) մասնակցում են քաղաքացիների զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումների իրականացման գործընթացին.

8) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում և զորահավաքի ժամանակ օժանդակում են զինվորական կոմիսարիատներին զորահավաքային խնդիրների լուծմանը.

9) ապահովում են զորահավաքի ժամանակ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցելը, տրանսպորտային միջոցները հավաքակայան կամ զորամասեր առաքելը, զորահավաքային պլանների համաձայն՝ շենքեր, կառույցներ և հողամասեր, հաղորդակցության, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ տրամադրելը.

10) իրականացնում են իրենց համակարգերի տեղեկատվական անվտանգության ապահովումը.

11) իրականացնում են պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

~~ՀՈԴՎԱԾ 17. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԸ~~

~~1. Զինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը ենթակա մարմին է:~~

~~2. Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝~~

~~1) ղեկավարում է գլխավոր շտաբի գործունեությունը, պատասխանատու է գլխավոր շտաբին առաջադրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.~~

~~2) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ գլխավոր շտաբի անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ գլխավոր շտաբի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.~~

~~3) իր իրավասության սահմաններում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր շտաբի համակարգի զինվորական, քաղաքացիական և այլ ծառայողների (աշխատողների), շնորհում է զինվորական կոչումներ, ինչպես նաև իր իրավասության սահմաններում կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.~~

~~4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին է ներկայացնում գլխավոր շտաբի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքային թվաքանակը.~~

~~5) իրականացնում է հսկողություն գլխավոր շտաբին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության և նպատակային օգտագործման նկատմամբ.~~

~~6) մշակում և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին է ներկայացնում՝~~

~~ա. առաջարկություններ՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների, ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի, պետական բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրերում զինված ուժերի պահպանման ծախսերի վերաբերյալ,~~

~~բ. զինված ուժերի զարգացման, ծավալման, զորահավաքային, կիրառման, տարածքի օպերատիվ սարքավորման պլանները, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման և ռազմավարական այլ պետական ծրագրերը, զինված ուժերի կառուցվածքը, հաստիքային թվաքանակը,~~

~~գ. զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերի, զինվորական հաշվառումը վարելու հրահանգի, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների,~~

~~ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերի վերաբերյալ առաջարկություններ,~~

~~դ. քաղաքացիական պաշտպանության պլանավորման վերաբերյալ առաջարկություններ.~~

~~7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~

~~3. Զինված ուժերի գլխավոր շտաբը՝~~

~~1) կազմակերպում է զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային ու ռազմավարական ծավալումը.~~

~~2) պատասխանատու է զինված ուժերի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական և բարոյահոգեբանական պատրաստության, անձնակազմի զինվորական կարգապահության և հայրենասիրական դաստիարակության համար.~~

~~3) իրականացնում է զինված ուժերը զորահավաքային ծավալման ռազմական տեխնիկայով, սպառազինությամբ և նյութական այլ միջոցներով ընթացիկ ու հեռանկարային պլանավորման, ինչպես նաև խաղաղ ժամանակ այդ միջոցների կուտակման, պահպանման և տեղաբաշխման ապահովումը.~~

~~4) իրականացնում է հավանական պատերազմի և ռազմական գործողությունների վարման մեթոդների և միջոցների, ռազմական սպառնալիքների կանխատեսումը, գնահատումը և կանխարգելման միջոցառումների պլանավորումը.~~

~~5) իրականացնում է հետախուզական գործունեություն՝ պաշտպանության և անվտանգության նպատակով.~~

~~6) ապահովում է պահեստազորային պատրաստության իրականացումը.~~

~~7) խաղաղ ժամանակ կազմակերպում է զինված ուժերի կապի և տեղեկատվության համակարգի գործունեությունն ու զարգացումը, պլանավորում և ապահովում է դրա կիրառումը ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ.~~

~~8) կազմակերպում է զինված ուժերի օպերատիվ, տեխնիկական և թիկունքային ապահովումը.~~

~~9) համակարգում է այլ զորքերի և ռազմական դրության ժամանակ ստեղծվող հատուկ ստորաբաժանումների զորահավաքային պատրաստությունը, վերահսկում է դրանց զորահավաքային պատրաստականությունը.~~

~~10) իր իրավասության սահմաններում, միջազգային պայմանագրերին համապատասխան, իրականացնում է միջազգային ռազմական համագործակցություն օտարերկրյա պետությունների զինված ուժերի և միջազգային կազմակերպությունների հետ.~~

~~11) մասնակցում է՝~~

~~ա. զինված ուժերի կադրային քաղաքականության մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում դրա իրականացմանը,~~

~~բ. ռազմագիտական և ռազմակրթական ծրագրերի մշակմանը.~~

~~12) իր իրավասության շրջանակներում աջակցում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ապահովման գործընթացին.~~

~~13) իրականացնում է պաշտպանության ոլորտում օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~

Հոդված 17. Զինված ուժերի գլխավոր շտաբը

1. Զինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը ենթակա մարմին է:

2. Զինված ուժերի գլխավոր շտաբը՝

1) հանդիսանում է զինված ուժերի, իսկ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ՝ նաև այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի օպերատիվ կառավարման մարմինը.

2) ապահովում է զինված ուժերի ծավալումը և ռազմական դրության ու պատերազմի ժամանակ զինված ուժերի և այլ զորքերի կիրառումը՝ զինված ուժերի կիրառման պլանի համաձայն.

3) պատասխանատու է զինված ուժերի օպերատիվ, զորահավաքային և մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային պատրաստականության, զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության, զինվորական կարգապահության և հայրենասիրական դաստիարակության գործընթացի ապահովման համար.

4) իր լիազորությունների սահմաններում պատասխանատու է զինված ուժերի օպերատիվ, տեխնիկական և թիկունքային ապահովման համար.

5) իր լիազորությունների սահմաններում իրականացնում է զինված ուժերը ռազմական տեխնիկայով, սպառազինությամբ և նյութական այլ միջոցներով ընթացիկ ու հեռանկարային կարիքների և այդ միջոցների բաշխման պլանավորման գործընթացը.

6) իրականացնում է հավանական պատերազմի և ռազմական գործողությունների վարման ձևերի ու եղանակների, ռազմական սպառնալիքների կանխատեսումը, գնահատումը և կանխարգելման միջոցառումների պլանավորումը.

7) իրականացնում է հետախուզական գործունեություն՝ պաշտպանության և անվտանգության նպատակով.

8) ապահովում է զինված ուժերում տեղեկատվական անվտանգության կազմակերպման գործընթացը, պետական գաղտնիքի պահպանման միջոցառումների իրականացումը.

9) ապահովում է պահեստազորային պատրաստության, աշխարհազորի պատրաստության և կիրառման պլանավորումն ու իրականացումը.

10) խաղաղ ժամանակ կազմակերպում է զինված ուժերի կապի և տեղեկատվության համակարգի գործունեությունն ու զարգացումը, պլանավորում և ապահովում է դրա կիրառումը ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ.

11) համակարգում է այլ զորքերի և ռազմական դրության ժամանակ ստեղծվող հատուկ ստորաբաժանումների զորահավաքային պատրաստությունը, վերահսկում է դրանց զորահավաքային պատրաստականությունը.

12) կազմակերպում և ղեկավարում է զինված ուժերում գյուտարարական և նորարարական աշխատանքները.

13) իր իրավասության սահմաններում, միջազգային պայմանագրերին համապատասխան, իրականացնում է միջազգային ռազմական համագործակցություն օտարերկրյա պետությունների զինված ուժերի և միջազգային կազմակերպությունների հետ.

14) մասնակցում է՝

ա. զինված ուժերի կադրային քաղաքականության մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում դրա իրականացմանը,

բ. ռազմագիտական և ռազմակրթական ծրագրերի մշակմանը.

15) իր իրավասության շրջանակներում աջակցում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ապահովման գործընթացին.

16) իրականացնում է պաշտպանության ոլորտում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Զինված ուժերի գլխավոր շտաբում կառավարչական իրավահարաբերությունները կարգավորվում են օրենքով: Զինված ուժերի գլխավոր շտաբը ղեկավարում է զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Զինված ուժերի գլխավոր շտաբի պետն ունի տեղակալներ, որոնք նշանակվում են զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների և զորատեսակների գործունեության կառավարման ու համակարգման ուղղություններով:

4. Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝

1) ղեկավարում է զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեությունը, պատասխանատու է զինված ուժերի գլխավոր շտաբի խնդիրների իրականացման և գլխավոր շտաբի կողմից զինված ուժերի կառավարման համար.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հանձնարարականների և ցուցումների կատարումը, զինվորական կառավարման ոլորտում իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս կարգադրություններ, հանձնարարականներ ու ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ զինված ուժերի գլխավոր շտաբի անունից, ինչպես նաև տալիս է զինված ուժերի գլխավոր շտաբի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իր իրավասության սահմաններում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է զինված ուժերի գլխավոր շտաբի և զինված ուժերի զինվորական և այլ ծառայողների (աշխատողների), շնորհում է զինվորական կոչումներ, ինչպես նաև իր իրավասության սահմաններում կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

4) իրականացնում է հսկողություն գլխավոր շտաբին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության և նպատակային օգտագործման նկատմամբ.

5) զինված ուժերի գլխավոր շտաբի միջոցով մշակում և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին է ներկայացնում՝

ա. առաջարկություններ՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների, ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի, պետական բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրերում զինված ուժերի պահպանման ծախսերի վերաբերյալ,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության պլանում ներառվող Հայաստանի Հանրապետության զինված ուժերին վերաբերող պլանները և ծրագրերը, զինված ուժերի կառուցվածքը և թվաքանակը,

գ. զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունը և հաստիքային թվաքանակը.

դ. զինծառայողների կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն իրականացնելու, զենքի, ռազմամթերքի, ռազմական այլ գույքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող աշխարհների ու նյութերի հետ վարվելու և պահպանության, տրանսպորտային միջոցների և մարտական տեխնիկայի վարման ու շահագործման, թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնների, զինծառայողների որակավորումների տեսակների և դրանց շնորհման կարգի սահմանման վերաբերյալ առաջարկություններ.

ե. սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութատեխնիկական միջոցների կուտակման և ծախսի նորմաների, շահագործման ժամկետների վերաբերյալ առաջարկություններ.

զ. զինվորական հաշվառման, նախազորակոչային պատրաստության կարգերի, մարտական և շարային կանոնադրությունների, զինվորական հաշվառումը վարելու հրահանգի, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերի վերաբերյալ առաջարկություններ,

է. քաղաքացիական պաշտպանության պլանավորման վերաբերյալ առաջարկություններ.

5) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 23. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆ ԿՑԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

1. Պահեստազորում հաշվառված քաղաքացիները, իրենց ունեցած ռազմահաշվառական մասնագիտությանը համապատասխան, զինվորական կոմիսարիատների կողմից կցագրվում են զինված ուժերի պատերազմական ժամանակաշրջանի հաստիքների՝ զորահավաքային զորակոչի միջոցով զինված ուժերի համալրումն ապահովելու նպատակով: Քաղաքացիների պահեստազորային կցագրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:

2. Զորահավաքային ամրագրումը զորահավաքային ռեսուրսների հաշվառման և վերլուծության հատուկ համակարգ է, որն իրականացվում է ռազմական դրության և զորահավաքի ժամանակ ~~հանրապետության տնտեսության~~ *պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների* բնականոն գործունեությունն ապահովելու և բնակչության կենսական պահանջմունքները բավարարելու նպատակով:

3. Ամրագրվում են պահեստազորում հաշվառված և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, *զորահավաքային առաջադրանքներ ունեցող* կազմակերպություններում աշխատող՝ համապատասխան տարիք, մասնագիտություն ունեցող կամ պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիները, որոնց աշխատանքը համապատասխան մարմինների բնականոն գործունեությունը չխաթարելու համար չի կարող դադարեցվել զորահավաքի ժամանակ:

4. Ամրագրված քաղաքացիները խաղաղ ժամանակ ենթակա չեն կանչվելու վարժական հավաքների *, զինվորական վարժանքների* և զորավարժությունների, իսկ զորահավաքի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի:

5. Զորահավաքային ամրագրման կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ամրագրման ենթակա մասնագիտություններն ու պաշտոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 29. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

1. Զորահավաքի ժամանակ պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչն իրականացվում է զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային պլաններով նախատեսված ժամկետներում՝ զինվորական կոմիսարիատների կողմից:

2. Զորահավաքային զորակոչի ենթակա չէ այն քաղաքացին, որը՝

1) ամրագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

2) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի.

3) ունի չորս և ավելի երեխա.

4) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ~~պատգամավոր է:~~ *պատգամավոր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ կամ դատավոր կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ է, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը.*

5) ունի 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը) չունեն այլ զավակ կամ ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի առաջին խմբի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

6) ունի երեխա, որին խնամում է միայնակ.

7) ունի իր խնամքի տակ գտնվող մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ:

ՀՈԴՎԱԾ 29.1. ԱՇԽԱՐՀԱԶՈՐԸ

1. Աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:

2. Աշխարհազորի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը.

2) հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը.

3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:

3. Աշխարհազորի կիրառումը ներառում է՝

1) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը.

2) մասնակցությունը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ պայքարին.

3) մասնակցությունը հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը.

4) մասնակցությունը զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը.

5) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանությանը:

4. Աշխարհազորի համակարգը գործում է տարածքային սկզբունքով և ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ պայմանականորեն բաղկացած է զորամիավորումներից և դրանց ենթակա բրիգադներից ու գումարտակներից: Աշխարհազորի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով:

5. Աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը~~՝ զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհազորային շտաբի միջոցով~~ , *իսկ անմիջական ղեկավարումը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարությունը (այսուհետ՝ հրամանատարություն).*

6. Աշխարհազորային զորամիավորման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան տարածքային կառավարման մարմնի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի տեղակալը:

7. Աշխարհազորային բրիգադի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը:

8. Աշխարհազորային գումարտակի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ գյուղական բնակավայրեր ներառող չմիավորված համայնքի ղեկավարի տեղակալն է կամ միավորված համայնքի կազմում ներառված բնակավայրի վարչական ղեկավարը:

9. Սույն հոդվածի 6-8-րդ հոդվածներով սահմանված աշխարհազորային զորամիավորումների և դրանց ենթակա բրիգադների ու գումարտակների ղեկավարումն իրականացվում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:

10. Աշխարհազորային պայմանական բրիգադների և գումարտակների համալրումն աշխարհազորայիններով (այսուհետ նաև՝ աշխարհազորայինի հավաքագրում) տարածքային սկզբունքով իրականացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումները՝ պահեստազորում հաշվառված և պատերազմական ժամանակի հաստիքների չկցագրված քաղաքացիներից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան համայնքում (Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվառված քաղաքացիներից:

11. Աշխարհազորայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է: Պայմանագիր չի կարող կնքվել այն քաղաքացու հետ՝

1) որը ենթակա է պարտադիր զինվորական ծառայության.

2) որը հանդիսանում է զինծառայող կամ ոստիկանության ծառայող կամ փրկարար ծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ հարկադիր ծառայող.

3) որը պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

12. Հավաքագրված աշխարհազորայինների անվանացուցակները և կնքված պայմանագրերը ներկայացվում են ~~աշխարհազորային շտաբ~~ ***հրամանատարություն:*** Աշխարհազորայինին ամրակցվում է զենք, հատկացվում է զինվորական համազգեստ, և աշխարհազորայինը նշանակվում է համապատասխան պաշտոնի ~~աշխարհազորային շտաբի~~ ***հրամանատարության*** ղեկավարի (պետի) հրամանով: Աշխարհազորայիններին զենքի ամրակցման և պահպանման կարգը, կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

13. Աշխարհազորայինների պատրաստությունն իրականացվում է պատրաստության պլանների համաձայն անցկացվող պարապմունքների և վարժանքների միջոցով՝ ~~աշխարհազորային շտաբի~~ ***հրամանատարության*** ղեկավարի (պետի) հրամանով: Աշխատող աշխարհազորայինների պատրաստության և կիրառման գործընթացի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները: Աշխարհազորայինները պատրաստության և կիրառման ընթացքում ապահովվում են անվճար սննդով՝ զինծառայողների համար սահմանված կարգով ***, ինչպես նաև այդ ժամանակահատվածում նրանց հաշվարկվում է դրամական ապահովություն՝ ըստ նշանակված զինվորական պաշտոնների պայմանագրային զինծառայողների համար օրենքով սահմանված չափով:***